


ՀԱՅՈՑ ԳԲԵՐԻ
ԳՅՈՒՏԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ



Հայոց գրերի գյուտի առեղծվածը

10 ԱԲ-1

Երևանի Գ. Գյուլբենկյանի անվան
հ. 190 ավագ դպրոց

Երևան 2025



Նունե Մարտիրոսյան

Հայոց գրերի ստեղծման մասին հիմնովին հիշատակում են Կորյունը և Խորենացին: Գրերի գյուտը մինչև այսօր չվերծանված առեղծված է, քանի որ այն ունի ընդամենը 1600 և ավելի տարիների պատմություն: Հարցը այն է, նրանում, թե արդյո՞ք ունեցել ենք գիր մինչև Մեսրոպ Մաշտոցը:

Հայ ժողովրդի ձևավորումը ընթացել է հիմնականում մ.թ.ա. 2-1 հազարամյակներում: Հայկական ցեղերը ապրում էին Հայկական լեռնաշխարհում: Որոշ ուսումնասիրողներ այս գործընթացում առանձնացնում են Հայասա կոչվող ցեղային միության առաջատար դերը, որտեղից առաջացել է ՀԱՅ անվանումը: Ըստ պատմիչների՝ Հայկական լեռնաշխարհի հնագույն պետությունը եղել է Հայկյանների Արարատյան թագավորությունը մ.թ.ա. 9-րդ դարում: Այս բոլորի մասին տեղեկություններ կան իտեթական, ասորական և այլ աղբյուրներում: Այնուհետև Վանի թագավորություն, Մեծ Հայք և այլն: Միամտություն կլինի մտածել, որ այդպիսի հզոր թագավորությունները չեն ունեցել գիր: Գտնվելով աշխարհագրական այսպիսի դիրքում՝ ճանապարհների խաչմերուկում՝ հայերը հաճախակի կորցրել են պետականությունը և մշակութային արժեքները: Ինձ միշտ զարմացրել է, որ այլ երկրների սեպագիր արձանագրությունները պատմում են մեր մասին, բայց մեր սեփական արձանագրությունները այդպես էլ չկան: Կարծում եմ, որ սա բնաջնջման վտանգի արդյունք է, որը դարեր շարունակ հետապնդում է մեզ:

Ք.ա. 6-րդ դարից մինչև 301 թ.-ը ընկած ժամանակահատվածը հայալեզու նշանագրերի կիրառությունը սահմանափակվում էր տաճարներում, իսկ պետական գրագրության մեջ օգտագործվում էին օտարազգի այբուբենները: Այս ժամանակաշրջանում հայալեզու գրի մասին են վկայում բազմաթիվ պատմիչներ: Դրանցից են հույն պատմիչ Փիլատրատոսի տեղեկությունները 34- 35թթ.-ին իշխած հայոց արքա Արշակ Առաջինի օրոք գոյություն ունեցած հայալեզու և հայագիր դպրության մասին: Մեկ այլ հույն պատմիչ Հիպոլիտիս Բոստովիացին «235թ. ավարտած ժամանակագրություն» աշխատության մեջ , անդրադառնալով սեփական դպրություն ունեցող ժողովուրդների թեմային, հայերին նշում է նրանց շարքում: Սա նույնպես առեղծվածի բացահայտում է , որ մեսրոպյան գրերից առաջ հայերը ունեցել են գիր: Մինչև 301թ.-ը հայերը հեթանոս էին և ունեին 7 և ավելի Աստվածներ, որոնց մեջ էր Տիրը՝ գրի և դպրության Աստվածը: Եվ սա ևս մի փաստ է, որ հայերը ունեցել են գիր և դպրություն:

Կա ևս մի վարկած. 301թ-ին արգելվել է նախաքրիստոնոական կրոնը, և Ագաթանգեղոսի տեղեկությունների համաձայն՝ առաջին տաճարը, որ ավերվեց, Տիր աստծունն էր: Դրանից հետո Հայաստանում բացվեցին հունարենով և ասորերենով դպրոցներ: Թե ինչու միանգամից հայերենով դպրոցներ չեն բացվել չկա պատասխան, բայց կա մի հետաքրքիր ձեռագիր՝ Եթովպիայից գտնված, որը կոչվում է «Պատմություն Տրդատ թագավորի մասին», որտեղ գրված է, որ հայերը նախքան գիրը գրում էին հռոմեացիների գրով, հետո՝ պատերազմների ժամանակ, վշտացած հակառակորդներից, նրանք որոշեցին հրաժարվել, և 2 հայ

սրբեր՝ Թադեոսը և Մարտիրոսը իրենց տվեցին աղոթքներին, և Աստված տվեց նրանց նախ 12, հետո 24 տառեր, և ստեղծվեց հայոց 24-տառանոց այբուբենը Տրդատ Երրորդի ժամանակ: Սա մեզ թույլ է տալիս եզրակացնելու, որ նախքան 5-րդ դարը 4րդ դարում փորձեր են արվել գիր ստեղծելու:

Ըստ Խորենացու՝ Մաշտոցը սովորել և մեծացել է իր ծննդավայրում՝ Հացեկացում՝ մեծն Ներսեսի մոտ: Նա, փախչելով աշխարհային զբաղմունքներից, գնում է Գողթն գավառ և ապրում մենակյացի կյանքով: Այնտեղ վերացնում է թաթևված հեթանոսական աղանդը գավառի իշխանի՝ Շաբիթի օգնությամբ: Երբ երանելի Մեսրոպն ուսուցանում էր, նրան փոքր-ինչ դժվար էր և՛ կարդալը, և՛ թարգմանելը: Ուստի մտածեց մի հնար գտնել և հայոց լեզվի համար տառեր ստեղծել: Միջագետքում խառնաշփոթ էր առաջացել, և Վռամը մեր Վռամշապուհ արքային հրամայեց իջնել և խաղաղեցնել առաջացած վեճերը: Սակայն նրա համար նեղություն էր, քանի որ այն օրվանից, երբ Մեսրոպը հեռացավ, նա ուրիշ ճարտար դպիր չէր կարողանում գտնել. բոլորը պարսկական գիր էին օգտագործում: Նրան այդ առիթով Հաբել անունով քահանա մոտեցավ և խոստացավ ստեղծել հայոց տառերը. որը հարմարեցրել էր իր մերձավորը՝ Դանիել եպիսկոպոսը: Նա ուշադրություն չդարձրեց և վերադառնալով Հայաստան՝ տեսավ, որ բոլոր եպիսկոպոսները հավաքվել էին Մեսրոպի և Սահակի շուրջը և քննարկում էին հայոց գրերի հարցը: Երբ նա իմացավ, պատմեց բոլորին, այն ինչ վանականն ասել էր: Եվ նրանք սկսեցին ինդրել՝ ասելով, որ հոգ տանի այդ կարևոր բանի մասին: Այդ պատճառով նա Վահրիճ անունով մի մարդո՞ղ իրեն շատ հարազատ էր և հավատարիմ, ուղարկեց Հաբելի մոտ: Երկուսով գնացին և Դանիելից լավ հմտանալով տառերի շարքին, բերեցին և մատուցեցին Սահակին և Մեսրոպին: Նրանք էլ, այն սովորելով և երեխաներին վարժեցնելով, ժամանակի ընթացքում համոզվեցին, որ այդ նշանագրերը այդքան էլ չեն համապատասխանում հայերենի հնչյունաբանությանը: Եվ Մեսրոպը որոշում է հանձն առնել այդ պատասխանատու գործը: Աշակերտների հետ գնում է Դանիելի մոտ և նախկինից ավել բան չգտնելով՝ գնում է Եդեսիա՝ Պղատոն անունով մի ճարտասանի մոտ: Սակայն նա էլ ոչ մի բանով օգնել չի կարողանում նրանց, փոխարենը խորհուրդ է տալիս իր ուսուցիչներից մեկին՝ Եփիանոսին՝ ասելով, որ նա իրենց կօգնի: Գնում է Սամոսատ, քանի որ իմանում է որ Եփիանոսը մահացել է՝ թողնելով մի աշակերտ՝ Ջոռփանոսին, ով հրաշալի արվեստ ուներ: Մեսրոպը սրանից էլ շահ չի գտնում և ապավինում է աղոթքի: Եվ, ինչպես Խորենացին է ասում, «նա տեսնում է ո՛չ երազ քնի մեջ, ո՛չ տեսիլք արթնության մեջ», աչքերի առաջ երևում է աջ ձեռքի թաթ, որը քարի վրա նշմարում է մեր նշանագրերը: Այդպես ստեղծում է մեր տառերը և Ջոռփանոս գեղագրի հետ շտկում այն: Հետո իսկույն ձեռնարկում թարգմանություն՝ սկսելով Աստվածաշնչից՝ Սողոմոնի առակները և Նոր կտակարանը, որը փոխադրում է հայերեն լեզվի:

Առեղծվածի իմ բացահայտումը: Օգտվելով պատմական փաստերից և գրի շուրջը եղած ուսումնասիրություններից, Խորենացու, Կորյունի, Ագաթանգեղոսի և այլ պամիչների վկայություններից՝ եզրակացությունը մեկն է՝ Մաշտոցը տիրապետում էր բազմաթիվ լեզուների, ինչպիսիք են հունարենը, ասորերենը, պարսկերենը և այլ լեզուներ, նաև ձեռքի տակ ունենալով 24 տառանոց

այբուբենը, որը, ինչպես նշեցի, ստեղծել էին Թադեոս և Մարտիրոս սրբերը, նա ավելացրեց մեր լեզվին համապատասխան 36 հնչյունը Հռոփանոս գեղագրի օգնությամբ: Ինձ համար նրա առեղծվածը նրա աստվածային լինելու մեջ: Հայերը նոր էին ընդունել քրիստոնեությունը՝ ընդամենը 100 տարի, և գաղտնիք չէ, որ սրբազան պատերազմը բացահայտ և գաղտնի շարունակվել է մի քանի հարյուր տարի, որի ժամանակ զոհ են դարձել ոչ միայն հասարակ մարդիկ, այլև իմաստուններ, գիտուններ, համարձակ այրեր և կույսեր: Սրբացնելով գրերի գյուտը և թարգմանելով առաջին գիրքը՝ Աստվածաշունչը՝ անհնազանդ ազգին հնազանդեցրին, հավատքը ամրապնդեցին, եկեղեցու դերը մեծացրին պետության կյանքում: Ոչ մեկիս համար գաղտնիք չէ, որ ամեն հայ, մինչ այսօր իր հոգու խորքում արևորդի է, մի քիչ հեթանոս, և կրակը՝օջախը-տունը, յուրաքանչյուր հայի ամրոցն է: Բայց մենք ընդունում ենք մեր այբուբենը, սիրում այն, և ասում, որ

-Այբուբեն չէ սա,
Բերդ է անմատուց
Գանձ է աննվաճ
Դուռ է փրկության...

Համլետ Գաբրիելյան

Հայաստանի լուսավորության սկիզբը

Հայաստանի 387 թվականի ողբերգական բաժանումից հետո դժվար չի լինի եզրակացնել, որ գրերի գյուտը ընդհանուր ազգային ցնծություն և ոգևորություն պետք է պատճառեր հայ ժողովրդին:

Ահա թե ինչու Կորյունը «աստվածոտ» ձեռագրով է նկարագրում Մաշտոցի վերադառնալը Հայաստան՝ այն նմանեցնելով Մովսես մարգարեի Սիոն լեռից իջնելուն:

Ըստ Կորյունի նկարագրության, Մեսրոպին դիմավորելու գնացին թագավորը, կաթողիկոսը և ժողովրդի մի հոծ բազմություն:

Այդ պահից Հայաստանում սկսվում է երկարատև մի գործունեություն՝ անգրագետ ժողովրդին կրթելու, եկեղեցիներում ազգային լեզվով ժամերգություն կատարելու, քրիստոնեությունը մայրենի լեզվով ժողովրդին մատուցելու և հասկանալի դարձնելու համար:

Ազգի համար բախտավորություն պետք է համարել այն, որ գրերի գյուտից հետո դեռ 34 տարի ողջ էին Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը, որոնք շարունակում էին իրենց լուսավորչական գործը:

Նախ անհրաժեշտ էր ստեղծել դպրոցներ, որտեղ մարդիկ պետք է սովորեին գրագիտություն: Բացի այդ ներդրվեց թարգմանչական, ծաղկման և արտագրման արվեստները:

Այդպիսի դպրոցներ բացվեցին Հայաստանի գրեթե բոլոր հատվածներում մեծ մասամբ արքունական գանձարանի հաշվին:

Այդպիսի դպրոցների շարքին կարելի է դասել Ամարասը, որը Մաշտոցի հիմնած առաջին դպրոցներից մեկն է: Արցախի Հանրապետության Մաճկալաշեն գյուղի մոտ հիմնված այս վանքը գտնվում է Խազազ և Լուսավորիչ սարերի միջև ընկած գոգահովտում, որը, համաձայն հայ պատմիչների վկայությունների, հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը չորրորդ դարի սկզբին: Այն հատկապես նշանավոր է դառնում 4-րդ դարի կեսերից, երբ այնտեղ թաղում են Լուսավորչի թոռանը՝ Գրիգորիսին, ով նահատակվել էր Աղվանքում՝ քրիստոնեություն քարոզելու համար¹:

Առաջին ուսուցիչը՝ Մեսրոպ Մաշտոցը, որը Կորյունի կողմից կոչվել է «ուսուցանող», մինչ հայոց գրերի գյուտը ուներ աշակերտներ, որոնց սովորեցնում էր ասորերեն և հունարեն: Նա իր աշակերտների ուղեկցությամբ մեկնեց Ասորիք, որտեղից հայրենիք վերադառնալուց հետո այդ աշակերտները Մաշտոցի կողմից կարգվում են ուսուցիչներ:

¹ Շ. Մկրտչյան, «Ամարաս վանական համալիր», Էջմիածին պաշտոնական ամսագիր, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին հրատ., 2000թ., էջ 67-69:

Ուսուցիչ կարգված աշակերտներից էին Կորյունը, Եզնիկ Կողբացին, Մովսես Խորենացին և ուրիշներ: Առաջին ընթերցանության գիրքը Սաղմոսն էր, որը միևնույն ժամանակ եկեղեցական ժամերգության առաջին գիրքն էր: Սուրբ Մեսրոպը անդադար չըջում էր տարբեր գավառներում՝ նոր դպրոցներ հիմնելու, քարոզչություն իրականացնելու և ուսուցիչներ պատրաստելու համար:

Ըստ Կորյունի՝ Մաշտոցը գնում է Վիրք և Աղվանք ու նրանց համար ևս այբուբեն է ստեղծում: Բայց այստեղ կարելի է նկատել մի կարևոր հանգամանք, իհարկե, չնսեմացնելով Մաշտոցի գործունեությունը վրաց այբուբենի ստեղծման հարցում, կարծում եմ, որ այն չի կարելի է համեմատել այն ահռելի ջանքի հետ, որը ներդրել է Մեսրոպ Մաշտոցը հայոց այբուբենը ստեղծելիս:

Ասվածի խոսուն վկայությունն է այն, որ Բյուզանդիայի տիրապետության տակ գտնվող Հայաստանի արևմտյան մասում արգելվում էր հայերենով գրագրության իրականացումը, ուստի կարիք եղավ, որ Մեսրոպ Մաշտոցը անձամբ այցելի Պոլիս՝ հայոց գիրը կիրառելու թույլտվության համար: Իհարկե, հայերենի կիրառումը թույլատրվեց, բայց պայմանով, որ Սուրբ Գիրքը կթարգմանվի հունարեն և Մաշտոցի աշակերտները կմեկնեն Բյուզանդիա՝ հունարեն կրթություն ստանալու, Ասորիք գնալու փոխարեն²:

Համադրելով բերված փաստերը և վերլուծելով եղած տեղեկատվությունը՝ կարծում եմ, որ Կորյունի կողմից զուր չի տրվել Մաշտոցին «աստվածոտ» կոչումը, քանի որ գրերի գյուտի ստեղծման պատմությունը կապել միայն նախկինում մեր ունեցած գրի առկայության հետ, այնքան էլ միանշանակ չի լինի: Իհարկե, հասկանալի է, որ երազին վերագրել այս կարևորագույն առաքելությունը, ավելի մոտ է առասպել լինելու, քան իրականությանը, բայց տրամաբանությունը հուշում է, որ հեթանոսությանը ծառայած նշանները կամ տառերը չէին կարող լիարժեք համադրվել նոր կրոնի պահանջներին: Իսկ գրերի գյուտը ոչ միայն պետականության պահպանման կարևոր նախապայման էր, այլև ի սկզբանե կոչված էր ծառայելու քրիստոնեության քարոզին:

Ի մի բերելով ասելիքս՝ կարծում եմ, որ Մաշտոցը, օգտվելով գրային նախկին համակարգի նմուշներից, ստացել է լիովին նոր տառեր, իսկ այս գործում, իմ կարծիքով, ճիշտ չի լինի բացառել աստվածային նախախնամությունը կամ շնորհը: Ահա թե ինչու առաջին դպրոցները բացվում էին հենց վանական համալիրներում: Ասվածի խոսուն վկայությունը Ամարասի վանքն է:

² Ստ. Մալխասյանց, «Համառոտ դասընթաց Հայոց հին մատենագրութան», ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան 1936, էջ 11-13:

Գրիգոր Ավետիսյան

Մեսրոպ Մաշտոցը, տեսնելով Հայոց թագավորության անկումը, որոշում է հեռանալ աշխարհիկ կյանքից և դառնալ մենակյաց: Նա ծնվել էր Տարոնի Հացեկաց գյուղում, կրթություն ստացել Մեծն Ներսեսի մոտ և նրա մահից հետո դարձել արքունիքի քարտուղար: Սակայն Մեսրոպը նախընտրում է հոգևոր կյանքը և տեղափոխվում է Գողթն գավառ, որտեղ ապրում է մենակյացի կյանքով: Այդ շրջանում Գողթն գավառում դեռ կային հեթանոսական հավատալիքներ, որոնք Մեսրոպը վերացնում է գավառի իշխանի՝ Շաբիթի օգնությամբ: Նմանատիպ գործունեություն նա իրականացնում է նաև Սյունիքում Վաղինակ իշխանի աջակցությամբ: Մեսրոպը քարոզելիս դժվարություններ էր ունենում, քանի որ հայերեն գիր չկար, և նա ստիպված թարգմանում ու կարդում էր օտար լեզուներից: Այս պատճառով նա որոշում է ստեղծել հայերեն տառեր: Այդ ընթացքում Արկադ կայսրը հիվանդանում է, և Բյուզանդիայում անկարգություններ են սկսվում: Վռամշապուհ թագավորը ուղարկվում է Միջագետք՝ կարգուկանոն հաստատելու: Նա դժվարանում էր գտնել հմուտ քարտուղար, քանի որ Մեսրոպը հեռացել էր արքունիքից:

Այդ ժամանակ Հաբել անունով մի քահանա ներկայանում է թագավորին՝ պնդելով, որ կարող է ստեղծել հայերեն տառեր՝ Դանիել Եպիսկոպոսի օգնությամբ: Թագավորը մեծ ուշադրություն չի դարձնում, բայց երբ իմանում է, որ Մեծն Սահակը և Մեսրոպը նույնպես զբաղվում են այս հարցով, որոշում է աջակցել նրանց: Վահրիճ անունով մի մարդ ուղարկվում է Հաբելի մոտ, և նրանք միասին ուսումնասիրում են նախկինում ստեղծված տառերը, որոնք հիմնված էին հունարենի վրա: Սակայն Մեսրոպն ու Սահակը, փորձարկելով դրանք, հասկանում են, որ այդ տառերը չեն կարող լիարժեք արտահայտել հայերենի հնչյունները:

Սրանից հետո Մեսրոպը իր աշակերտների հետ գնում է Միջագետք՝ Դանիելի մոտ, բայց այդպես էլ չի գտնում այն, ինչ իրեն պետք էր: Ապա մեկնում է Եդեսիա՝ Պղատոն անունով մի հեթանոս ճարտասանի մոտ, ով փորձում է մտաբերել իր իմացած բոլոր հայերեն արտահայտությունները, սակայն օգուտ չի տալիս: Բայց նա պատմում է Մեսրոպին, թե ինքն առաջ ունեցել է մի ուսուցիչ՝ շատ հմուտ մարդ, Եպիփանոս անունով, որ հետո ճարտարների գրվածքները Եդեսիայի դիվանից առնելով՝ գնացել ու քրիստոնեություն է ընդունել: Մեսրոպին գուցե նա օգնի: Այդ ժամանակ Մեսրոպը, Բաբիլոն Եպիսկոպոսից օգնություն ստանալով, Փյունիկեով մեկնում է Սամոսատ, քանի որ Եպիփանոսը մեռած է լինում՝ թողնելով մի աշակերտ՝ Հռոփանոս անունով, որը հրաշալիորեն տիրապետում էր հունարենին և առանձնացել էր Սամոսում: Մեսրոպը գնում է նրա մոտ և սրանից էլ շահ չգտնելով՝ սկսում է աղոթել:

« Եվ տեսնում է ոչ երազ՝ քնի մեջ, ոչ տեսիլք՝ արթնության մեջ, այլ սրտի գործարանում նրա հոգու աչքերին երևում է այդ ձեռքի թաթ՝ քարի վրա գրելիս,

այնպես որ քարը գծերի հետքը պահում էր, ինչպես ձյան վրա: Եվ ոչ միայն երևաց, այլև բոլոր [գրերի] հանգամանքները նրա մտքում հավաքվեցին, ինչպես մի ամանում: Եվ աղոթքից վեր կենալով՝ ստեղծեց մեր նշանագրերը՝ Հռոփանոսի հետ ձևակերպելով Մեսրոպից պատրաստված գրերը, հայերեն տառերը ճիշտ հանդիպեցնելով հունարենի հնչյուններին »³:

Ապա սկսում են թարգմանել Աստվածաշունչը՝ սկսելով Սողոմոնի առակներից:

Դանիելյան նշանագրերը, որոնք հայտնաբերվել են Դանիել Եպիսկոպոսի մոտ IV դարի վերջին կամ V դարի սկզբին, կարևոր դեր են խաղացել հայ գրերի պատմության մեջ: Չնայած որոշ տեսակետների, որոնք ենթադրում են, որ դրանք օտար լեզվի նշանագրեր էին՝ կան հիմնավոր պատճառներ՝ պնդելու, որ դանիելյան գրերը հայկական ծագում ունեն: Նախ, պատմիչ Կորյունը իր «Վարք Մաշտոցի» աշխատությունում նշում է, որ դանիելյան գրերը հայկական տառեր էին: Մովսես Խորենացին դրանք անվանում է «վաղընջաց գրեալ շարագիր տառեր», իսկ Ղազար Փարպեցին նույնպես վկայում է դրանց հայկական լինելու մասին: Այս վկայությունները ցույց են տալիս, որ դանիելյան նշանագրերը համարվել են հին հայկական գրեր:

Բացի այդ, այն փաստը, որ դանիելյան գրերը դասավորված էին հունական այբուբենի հաջորդականությամբ, չի նշանակում, որ դրանք օտար ծագում ունեն: Հնարավոր է, որ այդ դասավորությունը պարզապես արտացոլում է այն ժամանակվա մշակութային ազդեցությունները կամ հարմարեցման փորձերը: Կարևոր է նշել, որ Մեսրոպ Մաշտոցը, ուսումնասիրելով դանիելյան նշանագրերը, գտնում է, որ դրանք թերի են և չեն համապատասխանում հայերենի հնչյունական համակարգին: Սակայն դա չի բացառում դրանց հայկական ծագումը, այլ մատնանշում է դրանց անկատարությունը: Ավելին՝ պատմական աղբյուրները ցույց են տալիս, որ հայերը ունեցել են գրային համակարգ նախքան Մաշտոցի կողմից այբուբենի ստեղծումը: Դանիելյան նշանագրերը կարող են լինել այդ նախամաշտոցյան գրային համակարգի մնացորդները, որոնք հետագայում կատարելագործվել են Մաշտոցի կողմից:

Փիլոստրատը (մ.թ. 175-249)՝ հռոմեական կայսր Կարակալայի պատմիչը, իր «Ապոլոնի Դիանան» գրքում պատմում է, որ Հայկական Տավրոսում մի մեծ հովազ են բռնել ոսկե օղակապը վզին, որի վրա հայերենով գրված է եղել. «Հայոց թագավոր Արշակից Դիոնիս աստծուն»:

Մխիթարյան բանասեր Հ. Ղուկաս Ինժինյանը գրում է, որ 1788 թվականին Ստամբուլում տեսել է Անգլիայի դեսպան Ինզլիի հավաքածուն, որը պարունակում էր Փոքր Ասիայում հավաքված հարյուր հազարավոր հին մետաղադրամներ և գտել դրանց մեջ թագավոր Պարթև Արշակունու (113-114 թթ.) հարյուրավոր մետաղադրամներ: Դրամների մի երեսին պատկերված է կրակներով սեղան, մյուս կողմում՝ թագավորի դիմանկարը և դրամի արտաքին եզրին գրված են հայերեն բառեր «հ», «տ», «պ», «կ», «ճ» և այլ տառերով:

³ Մ. Խորենացի. «Հայոց պատմություն», Երևան, 1981թ, էջ 292

Այսպիսով՝ ելնելով բոլոր այս փաստերից՝ կարծում եմ, որ հայոց գրերի գյուտի առեղծվածը կապված է Նախամաշտոցյան գրերի հետ, որոնց հիման վրա էլ 405 թ.-ին Մեսրոպ վարդապետը ստեղծում է հայոց գրերը:

Նարե Զայրապետյան

Մեսրոպը Տարոնի Զացեկաց գյուղից էր, ծնվել և սովորել էր մեծն Ներսեսի մոտ և նրա վախճանվելուց հետո արքունական դռանը քարտուղար էր նշանակվել: Նա, աշխարհային զբաղմունքներից փախչելով, դեռ զցելով մարմնական պատիվը, գնում էր երկնավորի հետևից: Գնում է Գողթն գավառը և, ապրում է մենակյացի կյանքով: Երբ երանելի Մեսրոպն ուսուցանում էր, ոչ փոքր նեղություն էր կրում, որովհետև ինքն էր թե՛ կարդացողը և թե՛ թարգմանողը, և եթե մի ուրիշն էր կարդում, երբ ինքն այդտեղ չէր լինում, ժողովրդին անհասկանալի էր մնում՝ թարգմանիչ չլինելու պատճառով: Ուստի նա մտադրվեց մի հնարք գտնել, հայոց լեզվի համար տառեր ստեղծել և աշխատանքի անձնատուր լինելով՝ զանազան փորձերով չարչարվում էր: Երբ Մեսրոպը արքունական դռնից հեռացավ, Վռամշապուհը ոչ մի ճարտար դպիր գտնել չէր կարողանում, որովհետև պարսկական գիր էին գործածում: Այս առիթով նրան ներկայացավ Զաբել անունով մի քահանա և խոստացավ հայերենի տառեր ստեղծել, որ հարմարեցրել էր Դանիել Եպիսկոպոսը՝ իր մերձավորը: Թագավորը Զայաստան գալով, տեսավ, որ բոլոր Եպիսկոպոսները ժողովվել են մեծն Սահակի և Մեսրոպի մոտ, հայերեն գրերի գյուտը հոգալու: Թագավորը նրանց պատմեց, ինչ որ վաննական ասել էր⁴:

Ուստի նա Վահրիճ անունով մի մարդու, պատգամավոր ուղարկեց Զաբելի մոտ: Նա Դանիելից վերցրեց վաղուց գրված տառերի շարք, որ դասավորված էր հունարենի օրինակով, և բերեց ու հանձնեց Սահակին և Մեսրոպին: Ուսումնասիրելով այդ նշանագրերը, նրանք համոզվեցին, որ դրանք ընդունակ չեն ճիշտ արտահայտել հայերեն բառերի հնչյունները:

Մեսրոպը գնում է աշակերտների հետ Միջագետք՝ Դանիելի մոտ և նախկինից ավելի բան չգտնելով՝ անցնում է Եդեսիա՝ Պղատոն անունով մի հեթանոս ճարտասանի մոտ: Նա ասաց, թե ինքն առաջ ունեցել է մի ուսուցիչ, որը քրիստոնեություն է ընդունել, անունը Եպիփանոս: Այդ ժամանակ Մեսրոպը դիմում է Սամոսին, որովհետև Եպիփանոսը մեռած է լինում, թողնելով մի աշակերտ Զոոփանոս անունով, որ հունարեն գրության հրաշալի արվեստ ուներ: Մեսրոպը, նրանից էլ շահ չգտնելով՝ ապավինում է աղոթքի: Եվ տեսնում է երազ՝ աջ ձեռքի թաթով քարի վրա գրելիս: Եվ նա աղոթքից վեր կենալով, ստեղծում է մեր նշանագրերը՝ Զոոփանոսի հետ ձևավորելով, հայերեն տառերը ճիշտ համադրելով հունարենի հնչյուններին: Եվ իսկույն ձեռնարկում է թարգմանություն՝ խորհրդաբար սկսելով առակներից, ամբողջ 22 հայտնի գրքերը և Նոր Կտակարանը փոխադրում են հայերենի:

Կարդալով և վերլուծելով Մովսես Խորենացու «Զայոց պատմությունը», կարելի է եզրակացնել, որ հայոց գրերի գյուտը կապված է Մեսրոպ Մաշտոցի անվան հետ և ունի ամեղծվածային ծագում:

Գրերի գյուտը Մաշտոցի համար երկար տարիների դեգերումների և փնտրտուքների արդյունքն է: Նա Սահակ Պարթևի երաշխավորությամբ սկսել է

⁴ Մովսես Խորենացի «Զայոց պատմություն», Երևան 1981թ

իր փնտրտուքները Ասորիքից և հասել մինչև Ամիդ, հետո՝ Եդեսիա քաղաքները, ուսումնասիրել օտարալեզու մատյանները, խորհրդակցել ասորի և հույն գիտնականների հետ և ապա միայն ստեղծել մեր նշանագրերը: Մեր ժողովրդի համար այդ օրհասական պահին բազմաթիվ հայորդիներ, այդ թվում՝ Մեսրոպ Մաշտոցը, սկսել են հուժկու շարժում՝ պահպանելու հայի լինելիությունը:

Մաշտոցը հասկանում էր, որ պետք է ստեղծել ազգապահպանության մի նոր հզոր զենք՝ ի դեմս հայոց գրերի: Նրա միտքը և գիտակցությունը կենտրոնացած էին գրերը ստեղծելու խնդրին: Երբեմն, անհաջողություններից հուսահատված, նա դիմել է աղոթքի՝ խնդրելով Տիրոջը օգնել իրեն: Եվ միգուցե գիտակցորեն կամ ենթագիտակցորեն տեսել է երազ՝ աջ ձեռքի թաթը քարի վրա գրելիս, ինչի արդյունքում էլ ստեղծել է մեր կատարյալ այբուբենը:

Չեմ կարող հերքել նաև այն փաստը, որ, անշուշտ, գոյություն են ունեցել նախամեսրոպյան գիր ու գրականություն: Սակայն դրանք, կենտրոնացված լինելով մեղիաններում և սահմանափակ կիրառվելով, քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու շրջանում հեթանոսական մյուս արժեքների հետ ոչնչացվել են: Եվ միգուցե դրանք հիմք են հանդիսացել Մաշտոցի համար, որոնք էլ նա կատարելագործել և համապատասխանեցրել է հայերենի հնչյունական համակարգին:

Եվ ի վերջո, նրա կատարած անգնահատելի աշխատանքի արդյունքն է, որ Հայ եկեղեցին Մաշտոցին դասել է իր սրբերի շարքը

Մանե Մովսեսյան

Բոլորս գիտենք, թե ով է Մեսրոպ Մաշտոցը: Բայց հետաքրքիր է, չէ՞, թե ինչպես հաջողվեց այս մեծությանը ստեղծել գրերը՝ այդքան կատարյալ, տարբերվող, դասակարգված և գեղեցիկ, որը մինչև օրս գրեթե չի փոփոխվել: Այս փաստը հանգեցնում է այն մտքին, որ նա ոչ միայն ժամանակի բանիմաց և կրթված գործիչներից էր, այլ նաև Աստծո ընտրյալ զավակ, քանի որ նրա կատարած աշխատանքը միայն ընտրյալները կարող էին կատարել: Եվ իհարկե, հնարավոր չէր լինի պատմականորեն չանդրադառնալ նրա կենսագրությանը, որը նաև կօգնի մեզ բացահայտելու գրերի գյուտի առեղծվածը:

Այս կարևոր աշխատանքը կատարած գործիչներից մեկն էլ Մաշտոցի աշակերտ Կորյունն էր, ով քաջատեղյակ էր իր ուսուցչի կյանքին: «Վարք Մաշտոցի» աշխատության մեջ Կորյունը հաղորդում է.

«Մաշտոց էր անունն այն մարդու, որ հիշեցինք մեր խոսքի սկզբում, որի համար և մենք հոգ ենք տարել պատմելու: Նա Տարոն գավառից էր, Հացեկաց գյուղից, Վարդան անունով երանելի մարդու որդին: Կրթվել էր հելլենական դպրոցամբ, հասել էր Արշակունիների դուռը, դարձել էր արքայի տված հրամանի ծառայողը, տեղյակ էր աշխարհական կարգերին, իր զինվորական արվեստով սիրելի էր դարձել իր զորականներին, ուշադրությամբ հետևում էր աստվածային գրքերի ընթերցանությանը, որով և շուտով լուսավորվեց ու թափանցեց աստվածային հրամանների հանգամանքների մեջ:»⁵

Նախաբանում Կորյունին հուզում է հետևյալ հարցը. արդյոք կարելի՞ է գրել կատարյալ մարդկանց վարքը: Պատասխանը հակիրճ է. կատարյալ մարդկանց վարքը պիտի գրվի սերունդներին որպես օրինակ ծառայելու համար: Այս ժամանակահատվածում հոգևորականության և արքունիքի շահերը համընկնում էին: Նրանց գլխավոր նպատակը իշխանությունը կորցրած Հայաստանի ինքնությունը պահելն էր:

Վռամշապուհ արքան շատ մտահոգ էր և մինչև Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթևի ժամանելը, նույնպես փնտրտուքների մեջ էր: Երբ ժամանում են Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը, թագավորը տեղեկացնում է, թե իրեն հաղորդել են, որ Դանիել անունով մի ասորի հոգևորականի մոտ կան հայոց գրեր: Վռամշապուհը Վահրիճ անունով մեկին ուղարկում է Հաբել երեցի մոտ, որը Դանիել եպիսկոպոսի մերձավորներից էր, և բերել է տալիս գրերը: Սակայն պարզվում է, որ դրանք չեն բավարարում հայերենի հնչյունական համակարգին:

Եվ Մեսրոպ Մաշտոցը ձեռնամուխ է լինում ստեղծելու հայերեն տառերը: Այդ նպատակով իր աշակերտների հետ մեկնում է Եդեսիա և Սամոսատ, որտեղ անցնում է տթևաջան աշխատանքի: Եդեսիայում էլ, ինչպես գրում է Կորյունը, Մաշտոցը «իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ՝ հայերեն լեզվի նշանագրեր» :

⁵ Կորյուն «Վարք Մաշտոցի», Մ. Աբեղյան, «Սովետական գրող» Երևան 1979, էջ 25-26

Սամոսատում էլ Հռոփանոս անունով մի հույն գրագրի հետ միասին «նշանագրերի բոլոր զանազանությունները՝ բարակն ու հաստը, կարճն ու երկայնը, առանձինն ու կրկնավորն ամբողջապես հորինելուց և վերջացնելուց հետո՝ ձեռնարկում է թարգմանություն՝ դիմելով երկու մարդկանց, իր աշակերտներին, որոնցից առաջինի անունը Հովհան է, Եկեղյաց գավառից, և երկրորդինը՝ Հովսեփ՝ Պաղևական տնից, Եվ սկսեց թարգմանել Սուրբ գիրքը՝ նախ Սողոմոնի Առակներից, որ սկզբում հենց հանձնարարում է ծանոթ լինել իմաստության, ասելով, թե՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»⁶: Ահա այն նախադասությունը, որը առաջինը թարգմանվեց հայերեն: Պատահական չէ, որ առաջինը հենց այս նախադասությունն է թարգմանվել հայերեն:

Մաշտոցը լավ լուրով վերադարձավ Վաղարշապատ: Թագավորության կողմից լուսավորիչ Մաշտոցին ցույց տրված հանդիսավոր ու ջերմ ընդունելությունից հետո Կորյունը պատմում է Մաշտոցի՝ ինչպես Վաղարշապատում, այնպես էլ Հայաստանի գավառներում ծավալած ուսուցչական գործունեության և թարգմանչական աշխատանքի մասին: Գրերի գյուտից հետո Մաշտոցը նախ ուղևորվում է դեպի Արարատ լեռան հյուսիս-արևելյան շրջանները, ուր բնակիչների համար գրերի ուսուցումը դժվարամատչելի էր ոչ միայն իրենց հակաքրիստոնեական բարքի, այլև օտարահունչ և կոշտ ու կոպիտ լեզվի պատճառով: Նրա ծավալած աշխատանքը վկայում է նրա հայրենասիրության մասին: Բացի դա, Կորյունը բազմիցս գրել է, թե Մաշտոցն ինչքան մտահոգ է եղել երկրի ապագայի համար:

Այսպիսով, ես հակված եմ այն վարկածին, որ Մեսրոպ Մաշտոցը Աստծո կողմից ուղարկված երազում կամ տեսիլքում ուղղորդվել և իր սուրբ աջով ստեղծել է հայոց գրերը: Հարկ եմ համարում նշել, որ հայոց այբուբենը կատարյալ է իր հնչյունային համակարգով, քանի որ մեր կարող ենք արտահայտել բնության մեջ լսվող ցանկացած ձայն (բրզ, ճրռ, վրժ և մի շարք այլ բառեր): Բացի դրանից, հայերենի այբուբենը 405 թվականից ի վեր գրեթե չի փոփոխվել: Դա խոսում է այն մասին, որ հազարամյակների պատմությունն ունեցող գիրը արդիական և կարևոր է միշտ: Մենք միակն ենք, որ ունեցել ենք այնպիսի այբուբեն, որ ստեղծված օրից անփոփոխ է մնացել և իր կիրառությունը ժամանակի ընթացքթում չի անտեսվել:

Ես ընդունում եմ Մաշտոցի մեծությունը, բայց կարծում եմ, որ այս առեղծվածի գլխավոր դերում Աստված է: Նա պարզևատրել է Մաշտոցին իր վեհության, հավատքի և ջանասիրության համար, քանի որ Մաշտոցը ապրում էր իսկական հավատացյալի կյանքով:

⁶ Կորյուն «Վարք Մաշտոցի», Մ. Աբեղյան, «Սովետական գրող» Երևան 1979, էջ 30

Կորյուն Գաբոյան

Հայոց գրերի ստեղծումը 405-406 թվականներին Մեսրոպ Մաշտոցի կողմից, իմ կարծիքով, հայ ժողովրդի պատմության ամենանշանակալի իրադարձություններից մեկն է: Ես ուսումնասիրել եմ այս թեման և համոզվել, որ այն ոչ միայն լեզվաբանական, այլև ազգային ինքնության պահպանման կարևոր քայլ էր: Այն տեղի ունեցավ մի ժամանակ, երբ Հայաստանը բարդ իրավիճակում էր՝ բաժանված Բյուզանդիայի և Սասանյան Պարսկաստանի միջև: Քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելուց հետո (301 թ.) հայերը զգացին, որ իրենց պետք է սեփական գրեր՝ կրոնական ուսմունքը տարածելու և ազգային ինքնությունը պահպանելու համար:

Մեսրոպ Մաշտոցը, լինելով հոգևորական և կրթված մարդ, հասկացավ, որ առանց սեփական այբուբենի հնարավոր չէ զարգացնել կրթությունն ու մշակույթը: Մինչ այդ հայերը գրում էին հունարեն, ասորերեն կամ պարսկերեն, բայց այդ լեզուները չէին համապատասխանում հայերենի հնչյունային համակարգին: Մաշտոցը, Սահակ Պարթև կաթողիկոսի աջակցությամբ, սկսեց աշխատել նոր այբուբենի ստեղծման վրա: Նա ճանապարհորդեց Ասորիք և այլ երկրներ՝ ուսումնասիրելու տարբեր գրային համակարգեր: Վերադառնալով՝ նա ստեղծեց հայոց այբուբենը, որը բաղկացած էր 36 տառից և լիովին համապատասխանում էր հայերենի հնչյուններին: Ավելի ուշ՝ 12-րդ դարում, ավելացվեցին ևս երկու տառ՝ "օ" և "ֆ":

Իմ կարծիքով, գրերի ստեղծումը մեծ ազդեցություն ունեցավ հայ ժողովրդի վրա: Այն խթանեց թարգմանչական շարժումը, որի ընթացքում թարգմանվեցին բազմաթիվ կրոնական և գիտական գրքեր: Առաջին թարգմանված գիրքը Աստվածաշունչն էր, իսկ առաջին թարգմանված նախադասությունը՝ «Ճանաչել զիմաստութիւն եւ զիսրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Այս թարգմանությունները հիմք դրեցին հայ գրականության զարգացմանը, և 5-րդ դարը հայտնի դարձավ որպես «Ոսկեդար»: Ես գտնում եմ, որ այս թարգմանչական շարժումը ոչ միայն կրոնական, այլև գիտական և մշակութային մեծ նշանակություն ունեցավ:

Հայոց գրերը, իմ կարծիքով, ոչ միայն գործնական նշանակություն ունեին, այլև արտացոլում էին հայ ժողովրդի գեղագիտական ճաշակը: Տառերի ներդաշնակ ձևերը օգտագործվում էին նաև զարդարվեստում և ճարտարապետության մեջ: Գրերի ստեղծումը նպաստեց դպրոցների և կրթական կենտրոնների հիմնադրմանը, ինչը կարևոր դեր խաղաց հայ ժողովրդի մշակութային և ազգային ինքնության պահպանման գործում:

Այսպիսով, ես համոզված եմ, որ հայոց գրերի ստեղծումը ոչ միայն լեզվաբանական, այլև ազգային ինքնության պահպանման կարևոր քայլ էր: Այն հիմք դրեց հայ ժողովրդի լեզվի, գրականության և մշակույթի զարգացմանը և մինչ օրս մնում է մեր ինքնության կարևորագույն խորհրդանիշներից մեկը:

Նարեկ Հակոբյան

Գիրը հատուկ նշանների համակարգ է, որով մարդիկ կարողանում են գրի առնել իրենց խոսքը: Հայերեն «գիր» բառը առաջացել է «քերել», «քերթել» բառերից: Հնում մարդիկ իրենց մտքերը փոխանցում էին նկարներով կամ քանդակներով, բայց հետո սկսեցին օգտագործել հատուկ նշաններ՝ բառերն ու հնչյունները գրելու համար:

Մինչև 301 թվականը Հայաստանում հայերեն գրեր քիչ էին կիրառվում, որովհետև գրելու համար հիմնականում օգտագործվում էին օտար լեզուների այբուբենները: Այդ ժամանակ հայերը հիմնականում մեհենագրություն էին օգտագործում, որը կապված էր հին հավատքի հետ: Բայց երբ 301 թվականին քրիստոնեությունը դարձավ պետական կրոն, հեթանոսական մեհենագրությունը արգելվեց:

Քրիստոնեության ընդունումից հետո Հայաստանում շատ դպրոցներ բացվեցին, որտեղ դասավանդում էին հունարենով և ասորերենով: Հետագայում, երբ Հայաստանը հայտնվեց Պարսկաստանի ազդեցության տակ, արքունիքում սկսեցին գրել պահլավերենով: Այս բոլոր լեզուների այբուբենները հիմնված էին արամեական գրի վրա:

Կան տեղեկություններ, որ 4-րդ դարի սկզբին Թադեոսն ու Մարտիրոսը ստեղծել են հայերեն այբուբեն, բայց այդ մասին քիչ բան է հայտնի: Իսկ ամենակատարյալ այբուբենը ստեղծեց Մեսրոպ Մաշտոցը, որը համարվում է հայ դպրության հիմնադիրը: Նրա շնորհիվ հայերեն գրերը վերականգնվեցին, և սկսվեց հայերեն գրերի ու գրքերի տարածումը:

Մեսրոպ Մաշտոցը ծնվել է Հացեկաց գյուղում, որը հիմա գտնվում է Թուրքիայի տարածքում: 1915 թվականից հետո թուրքերը ջնջել են հայերի հետքերը, բայց այնտեղ դեռ կարելի է գտնել հին գրություններ՝ մեսրոպյան տառերով, սակայն թուրքերեն լեզվով:

Հայոց գրերի գյուտի պատմության մեջ որոշ աղբյուրներ մատնանշում են, որ 4-րդ դարի սկզբին Հայաստանում երկու սրբակյաց անձինք՝ Թադեոսն ու Մարտիրոսը, ստեղծել են 24 տառանոց այբուբեն: Այս տեղեկությունը հիմնականում հիմնված է եթովպիական աղբյուրների վրա, որոնք, սակայն, չեն տրամադրում մանրամասն տեղեկություններ այդ այբուբենի կառուցվածքի կամ կիրառության վերաբերյալ: Այլ պատմական աղբյուրներում այս տեղեկությունը չի հաստատվում, և այդ այբուբենի օրինակներ կամ հետքեր չեն հայտնաբերվել:

Թադեոսի և Մարտիրոսի կողմից 24 տառանոց այբուբենի ստեղծման մասին տեղեկությունը մնում է անորոշ և ապացուցված չէ: Հնարավոր է, որ այս պատմությունը արտացոլում է ավելի վաղ փորձեր՝ ստեղծելու հայերեն գրային համակարգ, սակայն առանց լրացուցիչ ապացույցների դժվար է գնահատել դրա իսկությունը:

Նանե Ղազարյան

Գիրը քաղաքակրթության մեծագույն նվաճումներից է: Գրի շնորհիվ մարդիկ կարողանում են օգտվել հին ժամանակների տեղեկություններից և գիտելիքներից:

Հայաստանում բազմաստվածության դարաշրջանում պաշտվել է դպրության աստվածը՝ Տիրը: Հայաստանում նույնիսկ հիերոգլիֆներ են օգտագործվել Տորթ Անգեղի ժամանակաշրջանում: Հետաքրքիր է, որ դպրության աստվածները ոչ միայն հանդես են գալիս որպես գիր արարողներ, այլ նաև աստվածներ, որոնք գրում են մարդկային ճակատագրեր: Հայերի մեջ մինչև օրս պահպանվել է «Գրողը քեզ տանի» անեծքը, որը նշանակում է, որ անունդ գրանցվի մահվան մատյանում:

Միջնադարում գրեր ստեղծած անձնավորությունները սրբացվել են: Գիրը ստեղծվել է որպես հիշողության և հաղորդակցության միջոց. դրա շնորհիվ հնարավոր դարձավ հաղորդակցություն անցյալի, ապագայի և ներկայի միջև:

Գիրը պայմանական նշանների համակարգ է, որոնցով հնարավոր է փոխանցել խոսքը: Նախնադարում նկարի միջոցով էին արտահայտվում մարդկանց գրային պահանջները: Հետագայում նկարը զարգացավ երկու ճանապարհով, որոնցից մեկը գրի ճանապարհն էր. պատկերագրերը վերածվեցին խոսքի մասեր արտահայտող նշանների:

Հայաստանում Զ.ա. 3-1-ին հազարամյակներում օգտագործվել է գծային գիրը, որը ունեցել է ավելի քան 400 նշան: Ապա Զ.ա. 9-7-րդ դարերում ի հայտ են եկել մեհենագրերը: Գրային այս համակարգը ունեցել է 300 մեհենանշան, որոնք գրվել են աջից ձախ և վերից վար: Զ.ա. 6-րդ դարից մինչև քրիստոնեության ընդունումը Հայաստանում հայալեզու նշանագրությունների կիրառումը սահմանափակվում էր տաճարներում, իսկ պետական գրառություններում օգտագործվում էին օտարազգի այբուբեններ:

Հույն պատմիչ Հիպպոլիտոսը իր աշխատություններից մեկում, երբ անդրադառնում է սեփական դպրություն ունեցող ժողովուրդներին, հայերին նույնպես նշում է: Այսինքն՝ հայագիր դպրություն նույնպես եղել է: 301 թվականին քրիստոնեությունը հռչակվում է պետական կրոն, և արգելվում է մեհենագրության գործածությունը, ինչի արդյունքում հայերը մնում են առանց գրի:

Այսպիսով՝ իմանալով նախագրության մասին, կարելի է անդրադառնալ բուն թեմային, թե ինչպես է Մեսրոպ Մաշտոցը ստեղծել հայոց գրերը:

Պատմությունից մեզ ծանոթ է, որ Մաշտոցը, մտահոգ լինելով հայ գրերի բացակայությունից, աշակերտներ է հավաքում, գնում է Եդեսիա, Ամիդ և այլ քաղաքներ՝ ուսումնասիրելու տարբեր գրային համակարգեր: Նա ուսումնասիրում է հին հայկական փորձերը, ինչպես նաև հունական, ասորական և այլ այբուբենները:

Բայց արդյո՞ք գրերի ստեղծման պատմության մեջ առասպելական բնույթ կա:

Իմ կարծիքով, Մաշտոցը, իրոք, գնացել է Եդեսիա և Ամիդ, գտել է հայ հին նշանագրերը, բայց դրանցից չի օգտվել, քանի որ դրանք չէին համապատասխանում:

Ինձ թվում է, որ Մաշտոցը երկար ժամանակ փորձում էր գտնել հայոց լեզվին համապատասխան գրեր, բայց չէր հաջողվում: Մի օր, երբ նա մտահոգ քայլում էր, աղոթում էր Աստծուն, որպեսզի բացահայտի հայոց գրերի գաղտնիքը: Այդ գիշեր Մաշտոցը երազ է տեսնում. մի լուսավոր հրեշտակ է հայտնվում և օդում գրում հայոց տառերը՝ ասելով, որ սա է հայ ժողովրդի այբուբենը:

Երբ Մաշտոցը արթնանում է, նա անմիջապես գրի է առնում տեսած նշանները և սկսում աշխատել դրանց կատարելագործման վրա: Հետո, երբ նա ստուգում է դրանք լեզվաբանական տեսանկյունից, համոզվում է, որ դրանք կատարյալ համապատասխանում են հայերենի հնչյունային համակարգին:

Այս առասպելը վկայում է այն մեծագույն նվիրումը, որով Մաշտոցն աշխատել է հայոց այբուբենի վրա, և այն հավատը, որ այս գործը աստվածային առաքելություն էր:

Ես հավատում եմ, որ, իրոք, հայոց գրերը այսպես են ստեղծվել: Այս պատմությունը, թեև ունի առասպելական բնույթ, ընդգծում է Մաշտոցի գործի կարևորությունն ու հոգևոր նշանակությունը հայ ժողովրդի համար:

Հասմիկ Հայրապետյան

Դեռ դարեր առաջ հայերը, չունենալով գիր, օգտագործել են տարբեր գրեր: 200-400-ական թվականներին տարածված էին պարսկերեն, ասորերեն և հունարեն գրերը: Գրի բացակայության փաստը այն ժամանակ քչերին էր մտահոգում, քանի որ դրա կարիքն առանձնապես չէր զգացվում: Իրավիճակը փոխվում է, երբ 301 թվականին քրիստոնեությունը ընդունվում է որպես պետական կրոն: Աստվածաշունչը գրված էր օտար լեզվով, և մենք չունեինք հնարավորություն այն թարգմանելու, իսկ ժողովուրդը չէր կարողանում այն կարդալ: Այստեղ արդեն գրի բացակայությունը լրջորեն զգացվեց:

387 թվականին առաջին անգամ Հայաստանը բաժանվեց Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև: Երկիրը կորցրել էր իր անկախությունը: Այս ծանր իրավիճակից դուրս գալու միակ ելքը միասնականությունն էր: Ամեն գնով անհրաժեշտ էր պահպանել կրոնը և մշակույթը: Մերոպ Մաշտոցը ծնվել է 361 թվականին: Նա Տարոն գավառի Հացեկաց գյուղից էր: Մաշտոցը կրթություն է ստացել Ներսես Մեծ հայրապետի մոտ: Նրա աշակերտ Կորյունը նշում է, որ Մաշտոցը լավ կրթություն էր ստացել և տիրապետում էր հունարենին, պարսկերենին, ասորերենին և վրացերենին: Հետագայում նա ծառայության է անցնում Արշակունիների արքունիքում՝ որպես զինվորական: Ծառայության ընթացքում սկսում է հետաքրքրվել քրիստոնեությամբ, իսկ որոշ ժամանակ անց՝ ավելի խոր ուսումնասիրություններից հետո, իր աշակերտների հետ գնում է Գողթն գավառ, սկսում է զբաղվել քարոզչությամբ և դառնում հոգևորական: Նա կարդում էր Աստվածաշունչը և թարգմանում այն ժողովրդի համար: . «Երբ երանելի Մերոպն ուսուցանում էր, ոչ փոքր նեղություն էր կրում, որովհետև ինքն էր թե՛ կարդացողը և թե՛ թարգմանողը, և եթե մի ուրիշն էր կարդում, երբ ինքն այնտեղ չէր լինում, ժողովրդին անհասկանալի էր մնում թարգմանչի լինելու պատճառով» (Մովսես Խորենացի, «Հայոց Պատմություն, Երևան, 1981, էջ 285):

Շուտով նա համոզվում է, որ իրենց չարչարանքները ապարդյուն էին, և քրիստոնեությունը շարունակում էր մնալ ժողովրդի համար անհասկանալի: Մերոպ Մաշտոցը որոշեց վերջնական լուծում տալ այս խնդրին: Նա Գողթն գավառից վերադառնում է Վաղարշապատ: Մաշտոցը որոշում է հանդիպել կաթողիկոս Սահակ Պարթևի հետ, և պարզվում է, որ նա ևս մտածում էր հայոց գրեր ստեղծելու մասին: Սահակն ու Մաշտոցը որոշեցին այս հարցով դիմել թագավոր Վռամշապուհին: Արքան լսում է նրանց առաջարկը, տալիս իր համաձայնությունը և պատմում Դանիել եպիսկոպոսի մասին, որը իր մոտ ուներ հայերեն լեզվի նշանագրեր: Վռամշապուհ արքայի օգնությամբ նրանց է փոխանցվում Դանիելյան գրերը, բայց շուտով հասկանում են, որ դրանք չեն համապատասխանում հայերենի հնչյունական համակարգին: Այս անգամ Մաշտոցը մտածեց, որ ավելի ճիշտ կլինի, եթե ինքը փորձի ստեղծել հայոց գիրը: Այդ նպատակով նա գնում է Ասորիքի տարբեր քաղաքներ՝ Սամոսատ, Ամիդ և Եդեսիա, որտեղ ուսումնասիրում է տարբեր լեզուների գրերը: Մի գիշեր, երբ Մաշտոցը նստած էր իր սեղանի մոտ և փորձում էր ստեղծել տառերը, նա քնում է

և երազում տեսնում դրանք: Կարծես թե Աստված, տեսնելով նրա այդքան չարչարանքները, եկել էր Մաշտոցին օգնության: Իսկ երբ նա արթնանում է, իր տեսած տառերը հանձնում է թղթին: Այսպիսով, 405 թվականին Մեսրոպ Մաշտոցը Եդեսիա քաղաքում ստեղծում է հայոց գրերը:

Դավիթ Նազարեթյան

Մովսես Խորենացին իր «Հայոց պատմություն» աշխատության մեջ անդրադառնում է հայոց գրերի գյուտին՝ ներկայացնելով դրա անհրաժեշտությունը, ընթացքը և նշանակությունը հայ ժողովրդի համար: Նա պատմում է, թե ինչպես Մեսրոպ Մաշտոցը, աստվածային ներշնչանքով առաջնորդվելով, ձեռնամուխ եղավ հայոց գրերի ստեղծմանը՝ ստանալով Վռամշապուհ թագավորի և Սահակ Պարթև կաթողիկոսի աջակցությունը:

1. Գրերի ստեղծման անհրաժեշտությունը

Մինչև Մեսրոպ Մաշտոցի գործունեությունը հայերը չունեին սեփական գիր, ինչի հետևանքով կրթությունը և կրոնական ուսուցումը հիմնված էին օտար լեզուների վրա: Խորենացին նկարագրում է, որ հայ ժողովուրդը, չունենալով իր գրային համակարգը, ստիպված էր օգտվել ասորերենից, հունարենից և պարսկերենից, ինչը բարդացնում էր ոչ միայն ուսումը, այլև քրիստոնեության քարոզը:

Խորենացին գրում է.

«Հայոց ազգը գրեր չուներ, և օգտվում էր օտար լեզուներից, ինչի պատճառով շատերը հեռանում էին իրենց արմատներից»⁷:

301 թ.-ին Հայաստանը պաշտոնապես ընդունել էր քրիստոնեությունը, իսկ դա նշանակում է, որ անհրաժեշտ էր ունենալ հայերեն գրություն, որպեսզի եկեղեցական ուսմունքը հասանելի դառնար ողջ ժողովրդին:

Բայց պատմությունը գալիս է ապացուցելու, որ բացի օտարալեզու գրից, հայերը ունեցել են որոշակի գրային նշաններ, որոնք ևս որոշակի ժամանակաշրջանի համար կիրառելի են եղել: Օրինակ՝ դանիելյան նշանագրերը համարվում են Մեսրոպ Մաշտոցից առաջ հայերեն գրելու հնարավոր փորձերից մեկը, թեև դրանց ծագումն ու կիրառությունը մինչ օրս մնում է անհստակ: Համաձայն որոշ պատմական աղբյուրների՝ այս գրերը Հայաստան է բերել ասորի Դանիել եպիսկոպոսը, սակայն հարցեր են առաջանում. նա ի՞նքն է ստեղծել դրանք, թե՞ պարզապես կատարելագործել արդեն գոյություն ունեցող նշաններ:

Նշանագրերը գործածվել են շատ կարճ ժամանակ և շուտով դուրս են եկել գործածությունից, քանի որ չէին համապատասխանում հայերենի հնչյունական համակարգին: Ենթադրվում է, որ դրանք բաղկացած էին մոտ 22 նշանից, որոնք արտահայտում էին միայն բաղաձայնները, ինչը դժվարացնում էր հայերեն բառերի ճիշտ ընթերցումը:

Տարբեր հետազոտողներ տարբեր տեսակետներ ունեն դրանց ծագման վերաբերյալ: Օրինակ՝ Ռոբերտ Թոմսոնը կարծում էր, որ դրանք սեմական արմատներ ունեն, իսկ Վերներ Չայմթը ենթադրում էր, որ դրանց հիմքում

⁷ Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», Երևանի համալսարանի հրատ., Երևան 1981, էջ 301-305:

սիրիերենն է՝ որոշ փոփոխություններով: Վալերի Բոյուսովն էլ ենթադրել է, որ դանիելյան նշանագրերով կարող էին ստեղծվել գրական գործեր, սակայն դրանցից ոչինչ չի պահպանվել:

Չնայած այս ամենին՝ դանիելյան նշանագրերը հայ գրերի պատմության հետաքրքիր և ամեղծվածային էջերից մեկն են, որոնք մինչ օրս մնում են ուսումնասիրությունների կենտրոնում: Եվ կարելի է ենթադրել, որ դրանք լուրջ հիմք են դարձել հետագայում հայոց գրերի ստեղծման համար⁸:

2. Մեսրոպ Մաշտոցի դերը գրերի ստեղծման գործում

Մեսրոպ Մաշտոցը, տեսնելով հայության առջև ծառայած խնդիրը, որոշում է գտնել հայոց գիրը կամ ստեղծել նորը: Խորենացին նրան նկարագրում է որպես «աստվածային ներշնչանքով առաջնորդվող անձնավորություն», որի առաքելությունը հայ ժողովրդին գրերի միջոցով լուսավորելն էր:

Մաշտոցը դիմում է Վռամշապուհ թագավորին և Սահակ Պարթև կաթողիկոսին, որոնք աջակցում են նրան այս մեծ գործի մեջ: Վռամշապուհը նրան ուղարկում է Ասորիք՝ գրերի որոնման նպատակով, որտեղ Մաշտոցը հանդիպում է մի իմաստունի՝ Դանիել անունով, որը ցույց է տալիս որոշ հին նշաններ, որոնք նախկինում օգտագործվել են հայոց գրության համար: Սակայն այդ նշանները անբավարար էին հայերենի բոլոր հնչյունները արտահայտելու համար:

Մաշտոցը վերադառնում է Հայաստան և իր աշակերտների հետ սկսում նոր այբուբենի մշակման աշխատանքը: Լեզվաբանական խոր ուսումնասիրությունների արդյունքում նա վերջապես կարողանում է ստեղծել 36 տառից կազմված նոր այբուբենը, որը լիովին արտացոլում էր հայերենի հնչյունային համակարգը:

Խորենացին գրում է.

«Եվ Մաշտոցը, աստծու շնորհով, հնարեց մեր ազգի գրերը, և սկսեց դրանցով ուսուցանել մարդկանց՝ լուսավորելով գիտությամբ և հավատով»⁹:

Այս նոր գրերով Մաշտոցը սկսում է դասավանդել և տարածել կրթությունը ողջ Հայաստանում:

Իմ կարծիքով, անհատը, որը ստանձնել էր ժողովրդին լուսավորելու ահռելի և պատասխանատու պարտավորությունը, չէր կարող իր մեջ չունենալ Աստծո շնորհ, բայց միայն դա բավարար չի կարելի համարել նման լուրջ գիտական աշխատանք կատարելու և կրթության գործը կազմակերպելու համար: Ուստի, ես կարծում եմ, որ դանիելյան նշանագրերը լուրջ հիմք և ազդեցություն են ունեցել հայոց գրերի ստեղծման հարցում:

⁸ Արտակ Մովսիսյան, «Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր ժառանգությունը», Գիտություն հրատ., Երևան 2005, էջ 87-100:

⁹ Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», Երևանի համալսարան հրատ., Երևան 1981, էջ 301-305:

3. Գրերի գյուտի ազդեցությունը

Գրերի ստեղծումից հետո Մեսրոպ Մաշտոցն իր աշակերտների հետ ձեռնարկում է հայերենով գրքերի ստեղծման մեծ ծրագիրը: Նրանք սկսում են թարգմանել քրիստոնեական գրականություն, իսկ առաջին թարգմանված գիրքը Աստվածաշունչն էր:

Աստվածաշնչի առաջին թարգմանված խոսքերը, ըստ ավանդության, եղել են.

«Ճանաչել զիմաստությունն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»

Այս խոսքերն արտահայտում են գրերի ստեղծման գլխավոր նպատակը՝ իմաստության և կրթության տարածումը հայ ժողովրդի մեջ:

4. Գրերի գյուտի ազգային և հոգևոր նշանակությունը

Մովսես Խորենացին հայոց գրերի գյուտը համարում է ազգային զարթոնքի հիմնական գործոնը: Գրերը հայ ժողովրդին տվեցին մշակութային ինքնուրույնություն և պաշտպանեցին օտար ազդեցություններից:

Խորենացին այս մասին գրում է.

«Հայոց ազգը, ստանալով իր գրերը, ազատվեց օտար լեզուների գերությունից և սկսեց ինքնուրույն գրականություն ստեղծել»:

Հայ գրերի գյուտը ոչ միայն ապահովեց եկեղեցական ուսուցման զարգացումը, այլև հիմք դրեց հայ պատմագրությանը, գրականությանը, գիտությանը և արվեստին¹⁰:

¹⁰ Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», Երևանի համալսարանի հրատ., Երևան 1981, էջ 301-305:

Անահիտ Բարեղամյան

Մեր միջնադարյան գրողների միջոցով մեզ հասել են բազմաթիվ գործեր միջնադարի , և ինչու ոչ, տվյալ գրողի կամ պատմիչի ապրած դարաշրջանի մասին: Այդպիսի պատմիչներից է Լեոն:

«Չայոց պատմության» առաջին հատորում ներկայացված են հին հեթանոսության մշակույթի և գրականության մասին , Լեոն այս ամենից եզրակացրել է , որ «Կարելի է, ուրեմն , ավելի հավանականությամբ ենթադրել , որ հայկական նշանագրեր գոյություն ունեին հին ժամանակներից... Որ հայ ժողովուրդը պիտի ունենա իր գրականությունը, այդ թելադրում է ասել և նրա լայն տարածված և ներթնապես զարգացած հեթանոսական պաշտամունքը»:¹

Այստեղ կարելի է ավելացնել նաև , որ Չայաստանը եղել է Չին Արևելքի զարգացած երկրներից մեկը, ուստի անհավանական է գիր և գրականություն չունենալը:

Ենթադրվում է նաև, որ մինչև մաշտոցյան գրերը հայերը գրել և օգտագործել են արամեական նշանագրերը: Այս մտքի հեղինակն է Յ. Օրբելին: Ըստ նրա Սևանա լճի մոտ գտնված արամեական երկու արձանագրությունները գրված են արամեական գրերով , բայց հայերենով:

Չին հեթանոսական շրջանում գրի առկայությունը կարող է վկայել գրի և դպրության աստծու գոյությունը: Չեթանոսական շրջանում գրի և դպրության աստված է համարվել Տիրը:

Սակայն քրիստոնեության ընդունումից հետո Տրդատը և Գրիգոր Լուսավորիչը վերացրել են հեթանոսության հետ կապ ունեցող պատմամշակութային կենտրոնները , ուստի կարելի է ենթադրել , որ հետագա սերունդները, ինչպես նաև մենք այս ամենի մասին տեղեկանում ենք միայն բանավոր արձանագրությունների միջոցով:

Մեր պատմության ընթացքում մենք հանդիպել ենք տարբեր կարծրատիպերի , որոնց հանդիպում ենք նաև այժմ . արդյոք եղե՞լ են նախամաշտոցյան գրեր , թե՞ ոչ: Այս հարցին անդրադարձել են միջնադարի եթե ոչ բոլոր , ապա գրողների մեծամասնությունը:

Այս հարցերին պատասխանելու համար մենք անցում կատարենք պատմությանը:

Դեռևս մեր թվարկությունից առաջ երրորդ-երկրորդ հազարամյակներում հայերը ունեցել են գիր և գրականություն , դժվար է պատկերացնել , որ քիչ ժամանակ անց այս նշանագրերը անհետացել են:

Եվ այս ամենից հետո անհիմն չէ , որ չեիս ականավոր գիտնական Յրոզնու աշակերտ Յ. Ա. Մարտիրոսյանը գրել է թե , «Մեր նախնիները (այսինքն՝ հայերը) երկրորդ հազարամեակի երկրորդ կեսին արդեն սեպագիր կը գործածեին»:

Գրի առկայությունը անհրաժեշտ էր նաև Քրիստոնեությունը ընդունելու համար , քանի որ մարդկանց պետք էր գրել , բացատրել , թե ով էր Քրիստոսը , որտեղից էր եկել :

Մեզ նաև տեղեկություն է հասցրել Մեսրոպի աշակերտ Կորյունը , ով իր աշխատության մեջ անդրադարձել է դանիելյան գրերին , որոնք Յայաստան էին բերվել Վռամշապուհ արքայի օրոք :

Կորյուն դանիելյան գրերի մասին գրել է հետևյալը . «Յայլոց դպրութանց թաղեայ և յարուցեալ դիպեցան» , այսինքն՝ «Ուրիշի դպրություններից թաղված և հարություն առած գտնվեցին»:

Եզրակացություն՝ իմ կարդացած ուսումնասիրություններից և դիտած տեսահոլովակներից կարող եմ եզրակացնել , որ մինչև Մաշտոցի գրերի ստեղծելը մենք ունեցել ենք գիր և գրականություն , քանի որ , ինչպես նշվեց վերևում , մենք համարվել ենք Յին Արևելքի զարգացած երկրներից մեկը , և դժվար է պատկերացնել , թե ինչպես կարող էինք գոյատևել առանց գրի և գրականության: Ուսումնասիրությունում Աբրահամյանը ներկայացնում է նաև օտարերկյա պատմիչների կարծիքները , որտեղից նույնպես կարելի է եզրակացնել , որ մենք ունեցել ենք գիր:

Ունենք նաև Յ. Օրբելու կարծիքը , ով համաձայն էր , որ մենք օգտագործել ենք արամեական գրերը , մենք ունենք նաև սրա վառ ապացույցը , Սևանի մոտից գտել են արձանագրությամբ քարեր:

Այսպիսով իմ կարծիքով մենք ունեցել ենք գիր և գրականություն , սակայն մենք այժմ չունենք հստակ պատասխան կամ նույնիսկ ապացույց , թե ի՞նչ լեզվով ենք մենք հաղորդակցվել:

Բովանդակություն

1.Նունե Մարտիրոսյան.....	3
2.Համլետ Գաբրիելյան.....	6
3.Գրիգոր Ավետիսյան.....	8
4.Նարե Հայրապետյան.....	11
5.Մանե Մովսեսյան.....	13
6.Կորյուն Գաբրյան.....	15
7.Նարեկ Հակոբյան.....	16
8.Նանե Ղազարյան.....	17
9.Հասմիկ Հայրապետյան.....	19
10.Դավիթ Նազարեթյան.....	21
11.Անահիտ Բարեղամյան.....	24

